



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման հավելվածի XVIII գլխից հետո լրացնել XVIII.1 գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«XVIII.1 ՀԱՅԱԴՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ
ՊԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

173.1 Հացադուլը կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից գիտակցաբար և սեփական կամքով քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հասցեագրված հայտարարությունն է՝ ցանկացած տեսակի սննդից և հեղուկից որոշակի ժամանակով կամ անժամկետ հրաժարվելու մասին, ինչն արտահայտում է նրա պահանջը կամ բողոքը որոշակի հարցի (հարցերի) վերաբերյալ:

173.2 Կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից հացադուլի իրականացումը վերջինիս իրավունքն է, որը ենթակա է անհապաղ արձանագրման քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից և չի կարող համարվել կալանքի տակ



արհեստական սնուցման ձևով բժշկական միջամտություն, և այդ մասին կատարում է համապատասխան գրառում նրա բժշկական քարտում:

173.8 Հացադուլ իրականացնելու փաստը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից արձանագրվելուց հետո քրեակատարողական հիմնարկի պետը կամ նրան փոխարինող անձը 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդում է ներկայացնում քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին և դատախազության համապատասխան ստորաբաժանում, իսկ կալանավորված անձի դեպքում՝ նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ նշելով հացադուլ իրականացնող անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը, կալանքի կամ պատժի սկիզբը, հացադուլի պատճառը և ամսաթիվը:

173.9 Հացադուլ իրականացնող կալանավորված անձի կամ դատապարտյալի համաձայնության առկայության դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է նրա ընտանիքի անդամներին:

173.10 Հացադուլ իրականացնելու ժամանակահատվածում կալանավորված անձը կամ դատապարտյալը գտնվում է մշտական (ամենօրյա) բժշկական հսկողության ներքո:

173.11 Բժիշկը պարտավոր է հացադուլ իրականացնող անձից յուրաքանչյուր օր ճշտել.

1) հացադուլը շարունակելու ցանկությունը,

2) գիտակցության մթազնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում համապատասխան բուժման կամ արհեստական սնուցման ձևով բժշկական միջամտության ենթարկվելու համաձայնությունը:

Բժիշկը ստացված տեղեկությունները յուրաքանչյուր օր գրառում է հացադուլ իրականացնող անձի բժշկական քարտում և պարտավորվում է ապահովել բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը:

173.12 Սույն կանոնակարգի 173.7 կետով նախատեսված բժշկական զննությունից հետո բժիշկը կարող է տալ իր գրավոր համաձայնությունը հացադուլ իրականացնող անձի ցանկությամբ չիրականացնել համապատասխան բուժում, իսկ վերջինիս գիտակցության մթազնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում՝ արհեստական



սնուցման ձևով բժշկական միջամտություն, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ իրավիճակում ուղղակի վտանգ է սպառնում նրա կյանքին: Այն դեպքում, երբ բժիշկը հրաժարվում է նման համաձայնություն տալուց, հացադուլ իրականացնող անձն իրավունք ունի օգտվել այլ բժշկի օգնությունից:

Հացադուլ իրականացնող կալանավորված անձի կամ դատապարտյալի գիտակցության մթազնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում պետք է կիրառվի անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում, որի վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու իրավունքը վերապահվում է բժշկին՝ հաշվի առնելով հացադուլ իրականացնող անձի վիճակը և նկատի ունենալով նախօրոք այդ հարցի կապակցությամբ վերջինիս տրված համաձայնությունը:

Հացադուլ իրականացնող կալանավորված անձի կամ դատապարտյալի կյանքին վտանգ սպառնալու դեպքում արհեստական սնուցման ձևով բժշկական միջամտությունն իրականացվում է բժշկի պատճառաբանված գրավոր եզրակացության հիման վրա:

173.13 Հացադուլ իրականացնող անձի ցանկությամբ վերջինիս հնարավորություն է տրվում ծանոթանալ իր առողջական վիճակի վերաբերյալ այլ բժիշկ-մասնագետի կարծիքին: Այլ բժիշկ-մասնագետի կողմից բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը կարող է թույլատրվել միայն քրեակատարողական հիմնարկի պետի կամ նրան փոխարինող անձի գրավոր համաձայնությամբ՝ բժշկական սպասարկման ստորաբաժանման ղեկավարի հետ խորհրդակցելուց հետո:

173.14 Հացադուլ իրականացնող անձի նկատմամբ չպետք է կիրառվի որևէ ճնշում այն դադարեցնելու նպատակով: Նրան տրամադրվող օգնությունը չի կարող պայմանավորվել հացադուլը դադարեցնելով:

173.15 Հացադուլ իրականացնող անձի կողմից բժշկական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու դեպքում բժշկի կողմից համապատասխան գրառում է կատարվում նրա բժշկական քարտում:

173.16 Հացադուլ իրականացնող անձը, ելնելով առողջական վիճակից կամ բժշկ-մասնագետի ցուցումներից, կարող է աշխատանքի դուրս չբերվել:



173.17 Հացադուլ իրականացնելու ընթացքում կալանավորված անձին կամ դատապարտյալին օրվա կարգացուցակով նախատեսված ժամերին առաջարկվում է օրվա սննդաբաժինը, իսկ հրաժարվելու դեպքում նշում է կատարվում նրա սննդի տրամադրման քարտում:

173.18 Հացադուլ իրականացնող անձանց տեղափոխումն այլ քրեակատարողական հիմնարկ, քննչական գործողությունների կատարման վայր կամ դատարան իրականացվում է ընդհանուր հիմունքներով, անհրաժեշտության դեպքում՝ բուժաշխատողի ուղեկցությամբ: Տեղափոխում չի իրականացվում քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման ստորաբաժանման ղեկավարի կողմից տրված հացադուլ իրականացնող անձի առողջական վիճակով պայմանավորված վերջինիս տեղափոխման անհնարինության վերաբերյալ պատճառաբանված գրավոր եզրակացության հիման վրա:

173.19 Հացադուլը դադարեցնելու վերաբերյալ կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարությունից հետո քրեակատարողական հիմնարկի պետը կամ նրան փոխարինող անձը այդ մասին անհապաղ գրավոր հաղորդում է ներկայացնում 173.8 կետում նշված պետական մարմիններին և պաշտոնատար անձանց: Բացի այդ՝ այդ մասին բժշկի կողմից համապատասխան գրառում է կատարվում բժշկական քարտում:

173.21 Հացադուլը դադարեցնելուց անմիջապես հետո բժշկի միջնորդությամբ անձը կարող է տեղափոխվել քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման ստորաբաժանման ստացիոնար բաժանմունք՝ առողջությունը վերականգնելու նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:



Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում ի հայտ եկած չկարգավորվող հարաբերությունների կարգավորմամբ: Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլի իրականացումը պարբերաբար կրկնվող երևույթ է, սակայն այս անձանց պահելու պայմանների առանձնահատկությունները ներկայումս ՀՀ օրենսդրությամբ կանոնակարգված չեն: Նմանատիպ իրավիճակը պրակտիկայում մի շարք խնդիրներ է առաջացնում, մասնավորապես՝ հիշյալ անձանց բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու և սնունդով ապահովելու հարցերի պարագայում:

Հացադուլը միջազգային պրակտիկայում ընդունված է օգտագործել որպես ռիսկային խմբի անձանց կողմից բողոքի արտահայտման միջոց, որը լայն տարածում է գտել հատկապես ազատազրկման դատապարտված անձանց շրջանում:

Մի շարք միջազգային կառույցների, ինչպես օրինակ՝ Էսոշիանցիայի և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԷԿԿ), Կարմիր խաչի միջազգային կազմակերպության (ԿԻՄԿ) չափանիշների համաձայն՝ հացադուլավորներին պետք է վերաբերվել ավելի շատ բուժիչ, այլ ոչ թե պատժիչ տեսանկյունից: Համապատասխան



կարգավիճակ ունեցող անձինք պետք է պահվեն այնպիսի պայմաններում, որ մշտապես գտնվեն բժշկի անմիջական հսկողության ներքո:

Միաժամանակ ղեկավարվելով ԽԿԿ-ի չափանիշներով՝ առողջ դատողություն և գիտակցություն ունեցող յուրաքանչյուր հիվանդ կարող է հրաժարվել բուժումից, ինչպես նաև այլ բժշկական օգնությունից և սպասարկումից: Ցանկացած շեղում այս հիմնական սկզբունքից պետք է հիմնված լինի օրենքի վրա և թույլատրելի՝ միայն հստակ և խիստ որոշակի առանձնահատուկ պայմաններում, ինչպեսև դա արվում է ամբողջ բնակչության համար:

Հացադուլի դեպքում, երբ հիվանդի վիճակը լրջորեն վատանում է, որոշ երկրների պետական մարմինները կամ պրոֆեսիոնալ կազմակերպությունները մահը կանխելու նպատակով պահանջում են բժշկի միջամտությունը: Այլ երկրներում բուժող բժիշկը իրավունք ունի վերջնական կլինիկական որոշում ընդունել միայն խորհրդատվություններ ստանալուց և գործին վերաբերող բոլոր փաստերը կշռադատելուց հետո:

ԿԽՄԿ-ն, որպես մարդասիրական կազմակերպություն, չի դիտարկում հացադուլը, իբրև ընդդիմության դրսևորում և հանդես չի գալիս որպես միջնորդ իշխանությունների և հացադուլ հայտարարած անձանց միջև: Վերջինս ձգտում է ապահովել դատապարտյալների նկատմամբ պատշաճ վերաբերմունք, բժշկական օգնություն և սպասարկում՝ հետևելով, որպեսզի նրանց մարդկային արժանապատվությունը չնվաստացվի և ազատ ընտրության իրավունքը չոտնահարվի (օրինակ՝ շարունակել հացադուլը կամ հրաժարվել դրանից): Հատկանշական է, որ ԿԽՄԿ-ն ուշադրություն է Հացադուլ իրականացնող անձը չի տառապում հոգեկան հիվանդությամբ, քանի որ հակառակ դեպքում վերջիններիս կողմից սթափ որոշումներ կայացնելու հետևանքները գիտակցելու ունակությունը դրվում է կասկածի տակ:

Հացադուլ իրականացնող անձանց հետ տարվող աշխատանքների շրջանակներում թերևս ամենից կարևոր խնդիրը կայանում է պատճառների վեր հանումը և օրինական պահանջների բավարարումը:

Հացադուլ իրականացնող անձանց կարգավիճակի խնդիրն անդրադարձ է կատարվել նաև Առողջապահության միջազգային ասոցիացիայի 1991 թվականի «Սննդի ընդունումից



Միաժամանակ, եթե բժշկի կարծիքով անձի վիճակը էականորեն վատանում է, ապա անհրաժեշտ է, որ բժիշկը այդ մասին զեկուցի համապատասխան մարմիններին և միջոցներ ձեռնարկի համապատասխան ազգային օրենսդրության:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվում է որոշման հավելվածի XVIII գլխից հետո լրացնել XVIII.1 գլուխ, որի արդյունքում կսահմանվեն հացադուլ իրականացնող անձանց պահելու պայմանների առանձնահատկությունները:

3. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման մեջ համապատասխան լրացում կատարելով՝ ակնկալվում է ունենալ հացադուլ իրականացնող անձանց պահման պայմանների, իրականացվող աշխատանքների և առանձնահատկությունների հստակ կանոնակարգում:



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում: